# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ Տ. ԶՈՀՐԱՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նոյեմբերի 10-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Զոհրապ վրդ. Կոստանյանը՝ ծառայությունն ինքնակամորեն լքելու կարգազանցության համար:

Կարգալույծ արված հոգևորականը դասվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավազանի անունով՝ Հրանտ Կոստանյան:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ Կալկաթայի Հայկական Մարդասիրական ճեմարանի ղեկավարի (մենեջեր) պաշտոնից ազատ է արձակվել տիկին Սոնյա Ջոնը:

Մարդասիրական ճեմարանի ղեկավարի պարտականությունների իրականացման համար Նորին Սրբության կողմից նշանակվել է ժամանակավոր հանձնախումբ՝ գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի: Ճեմարանի վարչական կառավարչի պարտականությունները շարունակում է կատարել Տիգրան սրկ. Բաղումյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*